



Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мелъ»,
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

ձմրագրութիւնը բաց է առաւօտան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է պատճառը.— Եւրֆիւն ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Փոքրիկ նկատողութիւններ. Նամակ Դիլիշա-
նից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.
—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Յունաց Պատ-
րիարքի փոխարարը այցելութիւնը. Նամակ
Գերմանիայից. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱՅԻՐ-
ՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻ-
ՐԱԿԱՆ. Յովսէփ կաթողիկոս Արդութեան.

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ

Հարաւային Ռուսաստանի գիւղատն-
տեսներից մէկը պատմում է, որ տեղական
խանութպանները գնում էին իրանից մեղր
պուզը տասը ռուբլով, իսկ ծախում էին
պուզը ութ ռուբլով, կամ ֆունտը 20 կո-
պէկով: Այդ օտարոտի երեւոյթի պատճա-
ռը սակայն շատ հասարակ է: Ի՞նչու ե-
կաւ բանից, որ խանութպանները ծա-
խում էին ոչ մաքուր և անարատ մեղր,
այլ կեղծած արդիւնք:

Երկրագործութեան միջնորդութեան
ժողոված տեղեկութիւններից երևում է,
որ մեղրի կեղծելը ընդարձակ զարգա-
ցում է ստացել և զգալի կերպով փնա-
տում է մեղրապահութեան շահերին:
Արհեստական կամ կեղծ մեղր պատրաս-
տելու համար գործ է ածվում մեծ մա-
սամբ մաթ կամ փոշաբ, որ ստացվում է
գետնախնձորի մշակութից: Այդ մաթը
շատ է ծանր գին ունի, նա արժէ պուզը
1 ռ. 20 կոպէկ, իսկ արհեստական մեղր
ծախվում է 2 ռ 40 կոպէկից սկսած մին-
չև 5—6 ռուբլի:

Արհեստական մեղր շինելու ամենամեծ
կենտրոններից մէկը գտնվում է Կովկասի
մօտ գտնվող տեղում, այն է Բօստով քա-
ղաքում, ուր գոյութիւն ունեն մի քանի
գործարաններ այդ նիւթի համար: Գոր-
ծարաններից մէկը, որքան յայտնի է,
1899 թուի աշնանը ծախել է 2000 պու-
զից աւելի արհեստական մեղր:

Մեր Անդրկովկասի մեծ քաղաքների վա-

ճառանոցներում ևս ծախվում է արհես-
տական կամ կեղծ մեղր, որ շնորհիւ իր
էփանութեան տարածվում է մեծ քանա-
կութեամբ:

Մեր երկրի մէջ մեղրապահութիւնը
կարող է աճող կերպով զարգանալ և ե-
ղած փորձերը ցոյց են տալիս, որ նա կա-
րող կը լինէր տալ մեր գիւղացու ձեռքը
շահաբեր զբաղմունք: Սակայն մեր երկրի
վաճառանոցը, խեղդված լինելով կեղծ
արդիւնքներից, չէ խրախուսում մեր մե-
ղրապահներին և նրանցից շատերը դժ-
ուարութիւնների մէջ են ընկնում, երբ
պէտք է վաճառահանել իրանց պատրաս-
տած մի քանի տասնեակ և մի քանի հա-
րիւր պուզ մեղրը:

Անկասկած ոչ ոք դէմ չէ կարող լինել
այն բանին, որ ազգաբնակչութիւնը ունե-
նայ իր ձեռքերի արդիւնքի էփան նիւթեր,
ինչպէս է մաթը, բայց անհրաժեշտ է
և պէտք է բողոքել այն բանի դէմ, երբ
այդ մաթը, խառնված մեղրի մի աննշան
քանակութեան հետ, ծախվում է մեղրի
անունով:

Թող մաթը ծախվի իր անունով և մեղ-
րը իր անունով: Այն ժամանակ զնոյրը
ստիպված չի լինի մեղրի տեղ գնել մաթ
թանգ գնով և վերջ ի վերջոյ չը ստանալ
իր որոնած մթերքը: Երբ որ մեղրի կեղ-
ծումների դէմ ձեռք առնված կը լինեն
էական միջոցներ և մեղրը սպառողները
կը պահանջեն իսկական մեղր, այն ժա-
մանակ մեղրապահութեան համար կը
բարւոյնը զարգացման պայմաններից մէկը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՈՔՐԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր ժողովրդապետների առաջնակարգ հոգ-
սերից մէկը ժողովրդական թատրոնն է: Ան-
չորրորդ տարին է, ինչ Թիֆլիսում կազմվել
է այդ գեղեցիկ հիմնարկութիւնը, որը տարեց
տարի առաջադիւմ է. նկատվում է ժողո-

ւարարութիւն տալիս: Գրիգորիօպօլը հիմնե-
լուց և ընկերակցելուց յետոյ նա կամեցաւ, որ
հայերի մէջ կազմվի ագնուական դասակարգ
էր պէտք էր ներկայացնել ծագման: վկայա-
կանները եւ Յովսէփը այդ վկայականները
ձեռք բերելու համար դիմում էր վրաց կառա-
վարութեան, թէ եւ Գրիգորիօպօլի հայերը,
ինչպէս տեսանք, Վրաստանի երեսն էլ չէին
տեսել եւ գաղթել էին թիրաքական նահանգ-
ներէ: Այս միջոցով այդ գաղթական հայերից
շատերը ագնուականութիւն ստացան, որով-
հետեւ վրաց կառավարութիւնը տալիս էր
Յովսէփի ուղած վկայականները:

1797 թուականի վերջերին արդէն յայտնի էր,
որ Հերակլ թագաւորը մահվան անկողնի մէջ
էր պառկած: Եւ ունէր յրգողութիւն: Գալը
պիտի ժառանգէր նրա որդի Գիորգին, բայց
նոյն իսկ թագաւորական ընտանիքում մի կա-
տաղի կուսակցութիւն էր կազմվել Գիորգիի
դէմ: Եւ թոյլ ու հիւանդոտ Գիորգին չէր էլ
կարող մտածել, թէ իր սեփական ոյժերով կա-
րող է յաղթանակել իր հակառակորդներին.
ուստի նա իր յոյսը դրեց առնների օգնու-
թեան վրա: Յովսէփ արքայիսկոպոսը Պետեր-
բուրգում Գիորգիի կուսակցից դարձաւ և
աշխատում էր նրա օգտին: Ծառ հետաքրքրա-
կան է նրա նամակը, որ գրված է Գիոր-
գին 1798 թուականի փետրվարի 14-ին: Այդ
նամակը նախ եւ առաջ լաւ լուսարանում է
Վրաստանի ներքին քաջայումը. Յովսէփը մի
շարք առաջարկութիւններ էր անում Գիորգիին,
կերպով կարգ ու կանոն հաստատելու համար:
Ուստի աւելորդ չենք համարում բերել այդ
նամակը (թարգմանված է գրաբարից *):

Թէպէտ ներքև նշանակված դիտարկութիւնները

*) Նամակը հանել ենք պ. Երեցեանի մօտ գտնվող
ժողովածուից:

վերջի բուն ձգտումը եւ սէրը դէպի այդ հիմ-
նարկութիւնը, սիրողների թիւ նկատելի աճու-
մը եւ վերջապէս տրված ներկայացումների
քանակութեան աւելանալը: Բայց այս բոլորը
շատ քիչ բաներ են, համեմատելով այն մեծ կա-
րիքի հետ, որ ունի ժողովուրդը: Որքան էլ
որ ժողովուրդը հետաքրքրվի, սիրողների թիւը
չառանայ, բայց եւ այնպէս մեր այժմեան դը-
րութեամբ չենք կարող ամենաշատը չափա-
կան 300 ժողովուրդ աւելի գոհութիւն պատճա-
ռել, քանի որ այժմ ունենք միմյան մի փոք-
րիկ չինութիւն Աւստրիան փողոցում, որտեղ
միմյան կայանում են ներկայացումները: Մեզ
հարկաւոր են դրա նման մի քանի չինութիւն-
ներ քաղաքի զանազան ժառանգում, բայց մաս-
նաւորապէս Հալաբաքում ունենալով ուղղակի
հիմնարկութիւն է: Այս հոգսը գլխաւորա-
պէս պէտք է քաջան հայոց եւ վրաց սէկկիա-
ները: Սեղօնի ամբողջ ընթացքում յաճախող-
ների մեծ մասը եղել են հետու թաղերից ե-
կողներ, որոնք գալու համար ժամանակի կո-
րուստ եւ ծախքներ են արել, իսկ ժողովրդա-
կան թատրոնի առաջին պայմանն է, որ էփան
ներկայացումներով ժողովրդին զբաւէ դէպի
լաւ եւ օգտակար դուրսնութիւն:

Այժմ ամենայնաւոր ժամանակն է հոգալու
Հալաբաքում թաժանմունք հիմնելու մասին:
Թէ եւ չոք է, թէ եւ հարուստները ցրվել են
ամառանոցները, բայց ժողովուրդը այստեղ է
եւ տնքում է առօրեայ աշխատանքից, ուրեմն
նրա բարեկամներն էլ պէտք է մնան եւ աշ-
խատեն նրա համար: Կարելի է գտնել մի
ազատ հող (լաւ է քաղաքային) եւ ժողովրդա-
կան թատրոնի համար հաւաքված գումարնե-
րից (եթէ չենք սխալվում) կայ մօտ 13,000
ռ.) 2000—3000 ռուբլի խնդրել այս նպատակի
համար եւ մինչեւ առաջիկայ սեզօնը աշխա-
տել գլուխ բերել այս գործը: 25-ը որ միւս
սեկկիաները աշխատանքին, որ վերոյիշեալ գու-
մարից յատկացնեն Աւստրիան թատրոնի վե-
րաշինութեան համար եւ շուտով կը հասնեն
իրանց նպատակին: Ուրեմն մենք էլ յետ չը
մնանք նրանցից:

Աշխատենք, պարոններ, աշխատենք. ձեռներս

ձեր Բարձրութիւնը հարկաւոր կը գտնէ և Աստուծով կը
գործէ արանց համեմատ, բայց եւ էլ, իբրեւ ապացոյց
իմ վերմուտեղութեան, ծանուցանում եմ ձեր Բարձ-
րութեան, որպէս զի բարեհաճութեամբ ընդունէք իր-
քե վերմուտեղ սրտից առաջադրած նուէր, և անտես
չանէք:

1. Բարեհաճեցէ ի նկատ առնել՝ ինչ որ ձեզ կը
յայտնէ ձեր պաշտօնակալը (լուստոյնդունել) որդին
և նրա համաձայն կատարեցէ, վերադառնելով նորին
պաշտօնակալութիւնը՝ արժանատու պատասխանով
որով պատճառ կը դառնար Վրաստանի մշտնջե-
կան խաղաղութեան և ձեր տոհմի հաստատ կացու-
թեան:

2. Ինչ դաւանութեան էլ պատկանելի լինի քո
հովանաւորութեան տակ ընկողը՝ նրա վրա խնամք
ունեցիր. կրօնի պատճառով խորութիւն չանես,
որովհետեւ դու ընդհանուր հայր ես հայրենիքի և
նրա մէջ ընկողների համար:

3. Բարձրը, Կարէթը և Սովիթը պահպանի ար-
անց որ եւ խորութեան, այնպէս որ ոչ մէկի
վերաբերութեամբ խնամքը աւելի կամ պակաս չը
լինի, այլ աշխատի բոլորին հաստատապէս շէն
պահել:

4. Երբեքանիստ Թիֆլիս քաղաքը լցրու զանազան
արհեստներով և ուսումով, հող չար նրա մէջ գե-
ղեցիկ շինութիւններ կառուցանելու, որպէս զի ար-
ժանատի լինի արքայական քաղաք կոչվելու և բո-
լոր շարքերից մաքրվի և ազատվի, ինչպէս անի-
րաւութիւններից, զրկանքներից, կոխերից ու գո-
ղութիւններից:

5. Ձեր Բարձրութիւնը թող չը բարեհաճի ցերեկը
թողնել ու դիշերը գործի՝ ձեռնարկելու, դատաւո-
րի կամ հաշիւների վերաբերեալ. որովհետեւ Թիֆլիսը
հրամայեց, թէ ով որ դիշերով կը գնայ՝ կը դա-
թակղի և աշխատի լուրջ չի տեսնի:

6. Տարին երկու անգամ թող հարկ առնվի ձեր
տաճիկներից, և չնչին բաների համար թաղարա-
կան հարկահաւաքներ չուղարկվեն նրանց մօտ,
որով նրանք կը լուրջեն:

7. Ձեր բոլոր տէրութիւնից հացի տաւանորդը
թող վճարվի արքունիքին, և դուք հարկաւոր տեղե-
րում հացի շտեմարաններ ունենալով՝ ներութիւն
չէք կրի պատերազմների ժամանակ գործ ժողովե-
լիս, որ զօրքերի ցրվելուն պատճառ դառնայ: Պա-
տերազմ չենք ժամանակ էլ՝ հացի պակասելու

ծալած չը նստենք. մեր այս գործը ոչ թէ մե-
նակ Թիֆլիսի ժողովրդի համար է, այլ եւ
նրա ալիքները հասնում են մինչեւ մեր դա-
ւառները. անցեալ սեզօնին քանի քանի դա-
ւառներից եկել էին յատկապէս այս գործը
ուսումնասիրելու եւ իրանց մօտ պատուա-
տելու. ուրեմն աշխատենք թէ գործի համար
եւ թէ օրինակ դառնալու համար:

Անյուշ

ՆԱՄԱԿ ԴԻԼԻՇԱՆԻՑ

Յուլիսի 1-ին

Դիլիշանը շատերին ծանօթ է թէ իբրեւ ա-
մառանոց եւ թէ իբրեւ իջեւան, որ գտնվում
է երեք ծանապարհների (Թիֆլիսի, Երևանի
եւ Ալեքսանդրօպօլի) միացման կէտում: Դեռ
1877 թւին առաւ-թուրքական պատերազմի
ժամանակ յայտնի էր իբրեւ օգով ու ջրով ա-
ռողջարար տեղ, ուր ուղարկվում էին բազմա-
թիւ հիւանդներ եւ վիրաւորվածներ բժշկվելու
համար. այն ժամանակվանից սկսվել է տեղիս
զինուորանոցի չինութիւնների կառուցումը,
որոնք այժմ բնում են անազին տարածու-
թիւն, առնելով գիւղական ազգաբնակու-
թեան հողերի միակ արդիւնաւէտ մա-
սը: Դիլիշանը բաղկացած է երկու մասից.—
հայերի թաղ կամ Հին-Դիլիշան եւ մալական-
ների թաղ կամ Նոր-Դիլիշան. բնակիչների
թիւը—հայեր՝ մօտ 200 տուն, չը հաւած ժա-
հառական եւ արհեստաւոր օտարականներին,
իսկ մալականներ—70—100 տուն:

Հայերը պարագում են գլխաւորապէս երկ-
րագործութեամբ եւ անասնապահութեամբ.
կան մի քանի արհեստաւորներ եւ վաճառա-
կաններ: Վաճառականների մեծ մասը օտարա-
կան հայեր են, որոնք կարճ ժամանակում կա-
րողացել են հարստութիւն եւ դիրք ձեռք բե-
րել. տեղական հայերից շատերն էլ դրանց
պարագները մէջ խրված են: Ընդհանուր առ-
մամբ մալականները, որոնք աւելի արհեստե-
րով եւ կառապանութեամբ են պարագում,
նիւթական կողմից աւելի բարւոք կացութիւն
ունեն, քան հայերը: Մօտ 120 տարի կը լինի ան-

դէպքում (այդ շտեմարաններից) ժողովրդին փոխ
կը տրվի, որով կարող կը լինէր նրանց օգնել՝
առանց որ և է փաստ կրկնու: Բայց ինչպէսզէ
եւ, որ լաճախակի հրամաններ չուղարկէր շտեմարա-
նների պահպաններին, որ արեղանելին ու երգող-
ներին հաց բաժանէ, այլ իւրաքանչիւր մարդ բա-
սականապէս իր պարտաւոր:

8. Ձեր տմարկի դրացիներին, մանաւանդ լէզգի-
ներին, երկիւղ ազդելու համար՝ պէտք է ունենաք
պատրաստ զօրք՝ որքան և կարող էք, որովհետեւ ա-
ռանց զօրքի զօր է որ և է ջանք: Զօրքերին առնի
կը տրվի հանքերից:

9. Ձանացեք հանքերը գործածութեան մէջ պա-
հել և շրջակայ գիւղացիներին շէն պահել, որովհե-
տեւ առանց սրանց՝ հանքերին հաստատութիւն չը կայ:

10. Ում որ չէ լաճախում որ և է գործ, իշխան
լինի թէ ագնուական, չը պէտք է միջամտեն այն
գործին, թէկուզ շինելու կամ աւելելու համար.
որպէս զի իրանց ետեղի չը շրջենք լրբացած,
ձեռնող (չ, զանուսակ) ծառաներ:

11. Ում որ ձեր Բարձրութիւնը մի բան պարգև է
տալիս՝ այլ եւ թող լիտ չառնէ նրանց, բայց (այն
դէպքերից, երբ պարգևատրվածը) պետութեան
թշնամի է դառնում, որովհետեւ արքայական պար-
գները անգաւառի են:

12. Դուք որ Լօդին հաստատ գրով շնորհել էք
աղա Շահմիրին և նա էլ չանձնել է Սեփե Լադրվին
հաստատ պահեցէ այդ ուսուր, որով ձեր հովանա-
ւորութեան տակ կը հրաւիրէ ոչ միայն Հնդկաս-
տանի հայերին, այլ և Վարսը և Վսայիսան, որոն-
ցից դատարկված բնակիչները կը լցնեն Փամբակ
ու Բօրայալուն:

13. Որովհետեւ հայերը պարծենում են Ձեզանով և
ուրախանում են, թէ մենք թագաւոր ունենք մեր
թագաւորների սերունդից՝ ուստի Ձեզ էլ հարկաւոր է
խօսքով ու գրով հարկական խնամք ցոյց տալ
նրանց, որպէս զի այդ տեսնելով թէ՛ Ձեր հովանա-
ւորութեան տակ գտնվող հայերը Ձեզ վերմուտեղու-
թեամբ ծառայել և թէ օտարահաւատակները Ձեր
հովանաւորութեան տակ լինեն:

14. Ս. Եջմածինի պարտաւորական աթոռը և ա-
մենայն հայոց սրբազան պատրիարք հոգեւոր Տիմուր
միշտ պատուով պահեցէ, անպակաս անելով նը-
րանից նպաստ ու միւրթաւորութիւն և խնամքով նը-
րան ինչպէս իսկական հայոց թագաւոր:

*) Տես ՎՊԻՆՈՒ ԴԵ 90.

ցած Հին-Դիլիշանի հիմնարկութիւնից, իսկ մաս-
լականները 50 տարի հազիւ կայ, որ գաղթել եւ
հաստատուել են Դիլիշանում Պատմութեան ծե-
րունիները, որ ամենաողորմելի աղքատ դրու-
թեան մէջ էին մայականները նոր եկած ժա-
մանակ, իրանցից էին ողորմութիւն եւ աշ-
խատանք խնդրում օրական ապրուստը ձարե-
լու: Իսկ այսօր, եթէ չամպեն հայերից շատե-
րը, իրանք կերթան նրանց մօտ գործի՝ օրա-
կան պարէնը հայթայթելու:

Երկար պէտք է գրել այդ ցաւալի իրողու-
թեան պատճառները բացատրելու համար, բայց
պատճառները պատճառը հայի նահապետական
կենսաբան, նիստ ու կացի մէջ մեխած լինելն է.
որ գործի, որ պարագայութեան մէջ ուղղում էր
զիտեցէ՞ք նրան, նա շատ քիչ է հեռացել մի
զար առաջ վարած կենսաբան. կան բաներ, ու-
րոնցով նա աւելի նահապետական է, քան ա-
մենայեւրոպէս գիւղի մարդիկը, իսկ այդ ներքին
չէ Դիլիշանի ժողովրդին, որ արտաքրուստ ա-
ռաջ գնացած է երեւում:

Նոյն յետաւանց պատկերն եւ տեսնում նաեւ
մտաւոր կենսաբան: Էսպէս մտաւոր կենսա-
բան արդիւնքը միշտ պէտք է երեւայ գործնա-
կան կենսաբանի մէջ. եթէ տեսական—մտաւոր
կենսաբանը աստիճանը ստոր է, չէ կարող բարձր
լինել գործնականը Այսպէս, եթէ մի անհատ,
ժողովուրդը ապրում է ներթափանցաւոր խեղճ,
միշտ օգնութեան կարօտ, ունենալով դրա հետ
սեփական միջոցներ վերականգնելու իր ընկած
դրուժանը,—եւ չէ անուտ, դա հետեւանք է
նրա մտաւոր աղքատութեան, նշանակում է—
նա յետ է մնացել ժամանակից:

Այդ դրութեան մէջ է գիլիշանցին. նա մի
կերպ ապրում է՝ իր սեւ օրը քարշ տալով,
տեսնում է, թէ ինչպէս ամարանոց են դալիս
մեծ քաղաքներից հարուստները, բերելով իրանց
հետ քաղաքային կենսաբան բազմազան պատկե-
րը՝ իր թէ վատ եւ թէ լաւ կողմերով, եւ բը-
նակվելով իրանց կողմին, կենսաբան նոր եղա-
նակի օրինակ են հանդիսանում: Տեսնում է
գիւղացին եւ ապշում համեմատելով իր կենսա-
բան քաղաքացու կենսաբան հետ. բնականապէս
առաջ է դալիս նմանակելու ցանկութիւնը. բայց
հրճան կործանիչ պէտք է լինի այդ նմանակելու
ցանկութիւնը, երբ տեղի է ունենում միակող-
մանի, արտաքրուստ եւ ոչ ներքուստ, չեմ ա-
ռում թէ նոյն իսկ կողմեր էլ կան, որոնցով
չը պէտք է նմանի քաղաքացուն, բայց, դժ-
բաղդաբար, հինգ այդ բացասական կողմերով
է տեղի ունենում նմանութիւնը:

Գաղափար կազմելու համար Դիլիշանի հա-
սարակութեան ինքնագիտակցութեան աստի-
ճանի մասին, թէ ինչպէս նա հասկացած պէտք
է լինի գտնել իր սեփական շահերը եւ օգուտ-
ները իրանց գիւղի՝ իրեն եւ ամարանոցի վերա-
բերմամբ: Բաւական է յիշել մի դէպք, որ տե-
-

ղի ունեցաւ անցեալ տարի եւ դեռ զբաղեց-
նում է շատերին, որովհետեւ չը վերջացաւ յո-
գուտ Դիլիշանի Դա նոր քաղաքային շինու-
թանից: Հին գրաստանի իր քաղաքային
պատկանում էր տեղական գիտութեան իշ-
խանութեան: Երկու տարի առաջ արդիւնքին
թէ տեղացի եւ թէ ամարանոց եկող հասա-
րակութեան մասնակցելու, իրեն օրինաւոր
անդամ, ամառվայ երեք ամիս ժամանակամի-
ջոցի քաղաքային կազմակերպ, ուր տեղի էին
ունենում պարահանդէսներ, ներկայացումներ,
որ ունէր լրագրիներ, զուարճութեան միջոցներ,
ի միջի կայաց թղթախաղ, որից մեծ օգուտ էր
ստանում քաղաքային, իսկ այժմ զրկւած են
այդ բոլորից: Անցեալ ամառ Դիլիշանի հասա-
րակութեան հասկացող մասը քաղաք եւ ծա-
ռուղի շինելու համար վճռեց յետ առնել հա-
սարակութեան պատկանող մի գետին, որ հա-
սարակական վճռով մի տարի առաջ նուիրել
են տեղացի մէկին՝ նրա դէպի հասարակու-
թիւնն ունեցած բարեգալակութեան համար
(գաւառագետի թարգման է—հասկանալի է...):
Պէտք է ասել առաջ ունենալ, որ այդ հողը
մի ակ յարմարն է ծառուղի եւ քաղաքային շի-
նելու համար, առանց որոնց Դիլիշանը, իրեն
ամարանոց, չէ կարող դուրսել ոչոքի, որովհե-
տեւ չունի աջակիսի մի գիւղ, որ կարելի լինի
իր բոլոր յարմարութիւններով ամարանոցներ
շինել, իսկ այդ պակասը պէտք է լրացնէ մի
ընդհանուր գրաստանի. եղած շինութիւնները
գտնում են զիւստօրակա Դիլիշանի միակ
փողոցի երկու կողմերում, որ յայտնի է իր
անմաքորութեամբ. դարչանոցութեան մէջ պէտք
է անցկացնեն իրանց հանգստութեան ժամերը
ամարանոց եկողները, որոնցից շատերը (մա-
նաւանդ հիւանդները) ոչ ոք չեն յարմարութիւն
չեն ունենում լեռները բարձրանալու մաքուր,
առողջարար օդին եւ սառն աղբիւրներից
օգուտները: Ել չեմ ասում, թէ անհրաժեշտ են
քաղաքին յատուկ զուարճութիւններ, ինչպէս
քաղաքացու, պարահանդէս եւ այլն:

Բայց արի տես, որ հաւ երկու տարի է՝
Դիլիշանի հասարակութեան մեծամասնութիւն-
ը չէ ուղղում հասկանալ այն, ինչ որ իր շա-
հերին է վերաբերում եւ կենսական նշանա-
կութիւն ունի իր համար: Զուգեցին քաղաք-
ային հողը յետ առնել, նախ՝ չը վերաբերելու
համար հասարակութեան ապագայ բարեբա-
րին (?), որ չը գիտեմ ինչ-ինչ միջոցներով
աղոթեցին է մի գեղեցիկ օր իր ջրածո լա-
ւութիւնների փոխարէն ստանալու ընդհա-
նուրի սեփականութիւնից՝ բայց ոչ ընդհանու-
րի կազմով. երկրորդ՝ այդ պարունակը չեն ու-
ղում իրանց խօսքը գետինը գցել, առարկելով
թէ՛ մենք մեր բաժինն ենք տուել, ամօթ է
միջ մեր խօսքը յետ առնել, չը նայած, որ ըն-
ծայած կտոր հողի փոխարէն մի ուրիշն են ա-

խիստ միջոցներին, խառնակութիւններ սկսվե-
ցին: Գառնի թեկնածուները այժմ էլ չը կարո-
ղացան միասին, այլ աւելի կատաղութեամբ
զինվելին միմեանց դէմ:

Այդ խառնակ դրութեան մէջ էր Վրաստանը,
երբ 1801 թ. փետրվարի 10-ին Թիֆլիս հասա-
Յովսէփ Արղութեանը: Նա այժմ ամենայն
հայոց կաթողիկոս էր եւ գնում էր Եւթիմիան:
Լաւ ժամանակն էր վրա հասնում Արղու-
թեանը, այն անգամ էլ նա իր գնահատելի
ծառայութիւնը մատուցեց ռուսաց կառավա-
րութեան: Տեղ հասնելուն պէս, նա սկսեց
հանգստացնել կրքերը, համոզել որ առանց
գիմադրութիւնների եւ ցնդումների ընդունվի
ռուսաց հայտնակութիւնը: Թիֆլիսի նշանաւոր
հայերը վաղուց աջակցում էին, որ ռուսաց
տիրապետութիւնը հաստատվի այնտեղ: Այժմ
նրանք միացրին իրանց ջանքերը Յովսէփ կա-
թողիկոսի ջանքերին. յայտնի են այդ հայերի մէջ
Թիֆլիսի մէջիւր, իշխան Դարչո Բեհլութեանը
եւ Յովսէփի եղբորորդին, իշխան Սոլոմոն Ար-
ղութեանը: Մի քանի օրվայ մէջ Յովսէփ կա-
թողիկոսը այնքան բան կարողացաւ անել, որ
գրում էր ռուսաց կառավարութեան. «Պայծա-
ռափալ արքայադուքսին մէջ եղած կոտորելը,
խռովութիւնները, գործեր հաւաքելը քանդվե-
ցան իմ խորհուրդներով. այժմ նրանց մէջ
հաշտութիւն է. մի քանի իշխաններ, իմ նա-
մակի համաձայն, եկան, իսկ մի քանիները
մտադիր են գալ» *):

Եւ իրաւ, Արղութեանը ոչինչ չը խնայեց,
որ Թիֆլիսում յօժարութեամբ ընդունվի իրե-
րի նոր դրութիւնը: Նրա գալուց մի քանի օր
յետոյ ժողովրդին յայտարարվեց Պաւել կայսրի
հրովարտակը. Հանդէսը, որ պիտի յաւերժաց-
նէր պատմական խոշոր իրողութիւնը, կա-

ռաջարկում, որ մի փոքր հեռու է գտնվում
նոյն տեղից. իսկ ընծայաբերված հողը արգելք
է հանդիսանում ծանապարհ շինելու նոր կա-
ռուցած քաղաքային համար, որ չուտով իբր թէ
բացվելու է, բայց չունի ոչ կարգին ծանա-
պարհ եւ ոչ ծառուղի:

Ասող

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուշի, յուլիսի 8-ին

Իմ ընկեր ուսանողներից մի քանիսը,—ոմանք
արտասահմանեան, ոմանք Ռուսաստանի քաղաք-
ներում, գտնվում են զրաւակալան անել վիճակի
մէջ: Նրանց խոստացված է ներթափանց օգնու-
թիւն, սակայն մեր հարուստները, այլ եւ մի
քանի «բարձրակրթ» պարսններ, ամբողջ օրը
զբաղված լինելով իրանց բարեկեցութեամբ,
միանգամայն մոռացել են, որ այդ ուսանողներն
էլ պէտք ունեն ապրելու ի հարկէ, եւ չեմ
ուզում պահանջել, որ այդ պարսնները հաց
տան, պահեն ուսանողներին: Ո՛չ. բայց որ
չար աստուածն էր պահանջում նրանցից խոս-
տանալ օգնութիւն: Կարգին մարդիկ չեն մո-
ռանում իրանց խոստումը—մէկ, երկրորդ՝
հասկանում են, որ օտար քաղաքում առանց
կօպէկ ունենալու չէ կարելի գիտութեամբ
պարագայել, բան ուսումնասիրելու: Առանց փողի
չուն հաշեցնել անգամ չէ կարելի: Խոստա-
նում են ամեն ամիս կանոնաւոր կերպով ու-
ղարկել նշանակված ամսաթիւները, առաջին
ամսինը ստացվում է, երկրորդինը—մի քանի
ամսից յետոյ, իսկ հետեւեալը ստանալիս ու-
սանողը կամ հիւանդ է լինում կամ պատրաստ-
վում է տուն դառնալ: Բայց ինչ փողով տուն
դառնալ:

Ամօթ է՞ք բերում միթէ այսպիսի օգնութիւնը
մեր բարեգործներին:

Ուսանող Ղ. Տէր-Ղազարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասեան գիւղատնտեսական եւ արդիւ-
նագործական ցուցահանդէսի գործադիր մաս-
նաժողովը որոշեց յայտարարութիւններ ըն-
դունելութեան ժամանակամիջոցը երկարացնել
մինչեւ օգոստոսի 1-ը:

Եսանայնա-Պոլսեանայից ստացված բոլոր վեր-
ջին տեղեկութիւնները վկայում են, որ Լ. Ն.
Տօլստոյի կազդուրումը քիչ ժամանակ առաջ
նրան պատահած հիւանդութիւնից ընթանում
է ամենաբնական կարգով: Կոմսը ոչ միայն
վեր է կենում անկողնից եւ պարագայում է
բազկաթոռում, այլ եւ ման է գալիս սենեակ-
ներում, դուրս չը գալով սակայն տանից:
Վերջին օրերը Լ. Ն. Տօլստոյ մինչեւ անգամ
կարողացել է վերջացնել իր նոր յօդուածը
բանտարանի հարցի մասին:

Ֆինանսների մինիստրութեան պոլիտիկին-

տարվեց հետեւեալ կերպով: Հրովարտակը նախ
կարդացվեց Սիւնի մայր եկեղեցու մէջ
հրամանատարը ամեն գոտիութիւնի ձեռք էր
առնել Հաւաքելով վրաց կաթողիկոսին եւ իշ-
խաններին պատարագի, գնեցեալ Լազարելի,
ժամասացութիւնը վերջանալուց յետոյ, յան-
կարծ կարդալ տուեց Պաւել կայսրի հրովար-
տակը: Եւ նրան ընդունեցին եկեղեցում ներ-
կայ եղողները: Բայց դա միայն հանդէսի
սկիզբն էր. նոյն իսկ այդ օրը չարաթ օր էր,
փետրվարի 16-ը, այնպէս որ զուտ պաշտո-
նական ընաւորութիւն էր կրում եկեղեցում
յայտարարված իրողութիւնը:

Բուն ժողովրդական մեծ տօնը տեղի ունե-
ցաւ հետեւեալ օրը, կիրակի, փետրվարի
17-ին: Եւ այդ ամբողջ փառաւոր տօնախմբ-
ութիւնը կատարեց Յովսէփ կաթողիկոսը
հայոց եկեղեցում:

Վաղ առաւօտանից ժողովրդի մեծ բազ-
մութիւն էր հաւաքվել բերդի եկեղեցում. պա-
տարագիր յետոյ այդ եկեղեցուց դուրս եկաւ
եկեղեցական շէնք զանազան, անցած քաղաքի
միջով եւ դիմեց քաղաքից դուրս գտնվող հայոց
Վանքի եկեղեցին: Թափօրին մասնակցում էին
74 քահանաներ, շատ վարդապետներ, եպիսկո-
պոսներ, Մէջտեղ տանում էին Պաւել կայսրի
պատկերը եւ նրա հրովարտակը: Այդտեղ էին
եւ վրաց հոգեւորականութիւնը, թաղաւորա-
կան տան ներկայացուցիչները, վրացի իշխա-
նները, ռուս գնեքարները, օֆիցերները:

Յովսէփ կաթողիկոսը գիմաւորեց թափօրը
Վանքի բակում: Նա խնկարկեց Պաւելի պատ-
կերին, ծուրը դրեց նրա առջեւ, ապա, հա-
մարեցով պատկերը, բարձրացրեց եւ բարձր
ձայնով արտասանեց.

—Կեցե՛ք մեծ, օգոստոսի առաջին կայսրը իր ամ-
բողջ ընտանիքի հետ:

կումը, որ այժմ շինվում է Պետերբուրգում,
պատրաստ կը լինի առաջիկայ աշնանը: Մայ-
րաքաղաքի լրագրիների ասելով, դեռ եւս
վերջնականապէս որոշված չէ այն հարցը, թէ
երբ կը սկսվի ուսումը պոլիտեխնիկումում եւ
երբ կը նշանակվի ուսանողների ընդունելու-
թիւնը: Հիմք կայ ենթադրելու, որ այս տարի
Պետերբուրգի պոլիտեխնիկումի I կուրսը ըն-
դունվելիք ուսանողների թիւը 100-ից աւելի
չի լինի:

Խարկովում, առաջիկայ սեպտեմբեր ամսի
երկրորդ կիսում, մտադրութիւն կայ բանալ ա-
նանապահութեան համառուսական ցուցահան-
դէս: Ցուցահանդէսը կուսնայ ձիապահութեան
առանձին բաժին:

Կառավարական շրջաններում մտադրութիւն
կայ էժանացնել հազարատիկների տեղափոխու-
թեան տարիքը պետական երկաթուղիների
վրա, իսկ այն տեղերում, որոնք ենթարկվել
են անբերրութեան, ենթադրվում է հիմնել
հազարատիկների լոմբարդներ՝ գիւղացիներին
փոքր տոկոսով փոխաւորութիւններ տալու հա-
մար:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրու-
թիւնը բացատրեց, որ մասնաւոր ուսումնա-
րաններ պահողները պէտք է ունենան օրէն-
քով որոշված կրթական ցէնը եւ բացի դրանից
պարտաւոր են անձամբ վարել այդ ուսումնա-
րանների կառավարիչները պաշտօնը:

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը միջ-
նորդութիւն է յարուցել պակասեցնելու ոչ-
խարի եւ տաւարի մսի սակագինը 1 կօպէկով:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստ-
րութիւնը առաջարկել է ուսումնարանական
շրջաններ ի հոգաբարձուներին քննելու այն
հարցը, թէ ինչ չափով կարելի է կրճատել
դպրոցական արձակուրդի օրերը՝ ուսուցման
սեւտորութիւնը երկարացնելու համար: Սրա
հետ միասին մինիստրութիւնը առաջարկել է
նաեւ հետեւեալ հարցը,—ինչ անյարմարու-
թիւններ կառուցանան, եթէ դպրոցական ար-
ձակուրդները բաժանվեն այսպէս՝ ձմեռային
արձակուրդ—դեկտեմբերի 20-ից մինչեւ յուն-
վարի 10-ը, գաղական արձակուրդ—ապրիլ եւ
յարութեան շաբաթները, եւ, վերջապէս, ա-
մարային արձակուրդ—յունիսի 20-ից մինչեւ
օգոստոսի 15-ը:

Պետական գանձարանի հրատարակած հաշ-
ւից երեւում է, որ 1901 թ.ի մայիսի 1-ին
գիտութեան բոլոր մասերի խնայողական
պրաքարկներում, որոնց թիւը հասնում է
5,447-ի, կային 3,667,427 պահեստի տուած
գումարներ 781,9 միլիոն ռուբլու: Պահեստի

Յետոյ, վերցնելով հրովարտակը, կաթողի-
կոսը դրեց իր գլխի վրա եւ ասաց.

—Երկրային Լաւրիչը թող բարձրացնէ եւ
ամբարնէ մեծ Պաւել թաղաւորութիւնը ինչ-
պէս արեգակ եւ լուսին, յաւիտեանս յաւի-
տանից...

Ժողովուրդը միաբերան լաւէն էր կանչում:
Եկեղեցում սկսվեց պատարագը: Սեղանի
առաջ դրված էին կայսրի պատկերն ու հո-
վարտակը: Պատարագից ինքը, կաթողիկոսն
էր: Նա ասաց մի վերին աստիճանի ոգեւոր-
ված քարոզ, մէկը այն քարոզներից, որ նա
գիտէր արտասանել հանդիսաւոր քաղաքներին,
ազդեցութիւն գործելու, լսողների մէջ տա-
մարութիւն ստեղծելու համար: Նա փառա-
բանեց այդ օրը, անուանելով նրան փրկու-
թեան, երջանկութեան, բարօրութեան օր, ու-
րին չէին արժանացել նախնիքները:

Պատարագից յետոյ, Վանքի բակում յատ-
կապէս այդ օրվայ համար շինված վրաններում,
Յովսէփ կաթողիկոսը բոլոր բարձրաստիճան
անձանց հիւրասիրեց ճաշով: Մի եւ նոյն ժա-
մանակ մի ռուս օֆիցէր 24 կօպէկների հետ
Թիֆլիսի փողոցներում յայտարարում էր պատ-
մական մեծ եղելութիւնը:

Այսպէս խաղաղ ու փառանք էր 1801 թը-
ականի փետրվարի 17-ը Թիֆլիսում, մի օր,
որ ամբողջ Անդրկովկասի համար պատմու-
թեան նոր շրջան էր բաց անում, մի օր, երբ
կրքերը, թշնամութիւնները առժամանակ լռե-
ցին՝ ռուսաց տիրապետութեան պատգամը լը-
սելու համար: Օրվայ հերոսը Յովսէփ կաթո-
ղիկոսն էր: Նա իր վերջին ծառայութիւնն էր
մատուցանում ռուսաց գահին: Նրա կենսաբի-
օրերը համարված էին:

(Վր շաբաթականի)

*) Акты Кавказ. Археогр. ком., т. I, № 530.

նաև որ բնակիչներ սպանվեցին թիւրքերի ձեռքով: Սերբ լրագրիչները հաւատարմութեամբ են, թէ յարձակումը Կոլարիէի վրա տեղի է ունեցել 4. Պոլսից ստացված հրամանով եւ որ այս գործի գլխավոր հերոսն եղել է գաղմագմա՝ Ալմայ-բէյ:

«Times» լրագրիչն հետադրում են Պարիզից, թէ այնտեղ ստացված հաւատարմութեան համաձայն, թուրքները, որոնք արտաքին գործերի մինիստր կոմս Լամզորֆի շուրջը կուգեւորվի Ֆրանսիա, փոխ-աշխույժութեամբ տալու ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Դէլկասէին: Կարծում են, որ կոմս Լամզորֆի կը գնայ Պարիզ սեպտեմբերին եւ այնուհետեւ կայցիլէ գերմանական եւ օսմանական արտաքին գործերի մինիստրներին:

—4. Պոլսից գրում են «С. П. Вѣд.» լրագրիչն. «Հետեւած գործերի 7-րորդ կորպուսի հրամանատար մարշալ Արքուլան-փաշա հաղորդում է ինքնից, որ զետեղված է այդ կորպուսը, թէ չէլիս Համդի-իրն-Պուրչի, որ իրան յայտարարել էր Մահմէդի սերունդ եւ նրա յայտնող եւ որ յուզում էր ինքնից ազգաբնակչութեան անգիտել, ընկած է եւ բանտարկված: Հասկանալու համար, թէ որքան այդ տեղեկութիւնը ուրախացրեց սուլթանին, պէտք է նկատել, որ չէլիս Համդի, հպարտութեամբ հրապարակելով սուլթանին առաջարկած բոլոր թանկագին բակիչներին եւ չքանչանքներին ու չը համաձայնվելով խաղաղութեան ոչ մի պայմանի, մեծ ջանքով թեմաք տարածում էր իր ուսմունքը կիսապայրենի բէգուներին, ինքնից բնակիչներին մէջ: Շէյխի ուսմունքը կայանում էր նրանում, որ սուլթանը Արքուլ-Համդի խալիֆ չէ, որ թիւրքերը արաբների ամենակատար թշնամիներն են, որ թիւրքերը մահմեդականներ չեն եւ որ, վերջապէս, անհրաժեշտ է ազատվել թիւրքական լծից:

«Daily News» հաղորդում է, թէ Թոհան-նէսրուդում, իրեն գերի ապրող բռնիների մէջ, տիրում է մահվան սարսափելի կոտորած: Այնտեղ գերութեան մէջ դեղերում են 3000 բռնիներ եւ եօթ շաքարվալ ընդդէմ նրանց մէջ պատահել են մահվան 139 դէպքեր, այնպէս որ մահացութեան տարեկան տոկոսը պէտք է հաշուել 344, այն ինչ մինչեւ անգամ Լոնդոնում, որ այդ բանի մէջ գերազանցում է եւ օրական բոլոր մայրաքաղաքները, մահացութիւնը 210-ից աւելի չէ: Այս թւերը ամենայն պերճաբանութեամբ ցոյց են տալիս, թէ ինչպիսի զարհուրելի պայմաններում են ապրում գերիները: Գերիների մէջ կան եւ բազմաթիւ կանայք եւ երեխաներ: Ի հարկէ, ամենից աւելի կոտորվում են այս վերջինները: Թոհան-նէսրուդում գերված երեխաների թիւը հասնում է 1,407-ի, որոնցից մահը արդէն տարել է բազմաթիւ զոհեր: Հիւանդների թիւն եւս չափազանց շատ է:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

16 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ. Յուլիսի 16-ին Բարձրագոյն ներկայութեամբ կայացաւ զինուորական դպրոցների վարժութիւնը, որից յետոյ Նոյսա Մեծու-թիւները այցելեցին կրթնոստիկան հիւանդանոցը:

ՆԵԱՊՈԼԻ. Կրիսպին առողջութիւնը շատ վրտանգաւոր դրութեան մէջ է:

ԼԱՍՈՍԱ. Այս առաւօտ ստորաշրեայ Գուստաւ-Ալէքէն նաւակը, որի վրա գտնվում էին վարդէկ-Ռուսոս եւ ծովային մինիստրը, կատարեց ջուրը սուզվելու զանազան փորձեր եւ ուրիշ նաւախաղեր:

ԱՆԻՍԻ. Գերմանական «Հերա» չորանաւով այս առաւօտ այստեղի նաւահանգիստը մտաւ ֆէլդմարշալ վարդէրդէ:

ՀՈՍՏ. Այսօր, Հոկտեմբեր թագաւորի մահվան տարեդարձին, քաղաքը սգաւորվեց, մաքաղիները փակվեցին առաւօտեան ժամի 7-ին: Պանթէօնում հոգեհանգիստ կատարվեց, որին ներկայ էր միմիայն արքայական ընտանիքը: Ղազմանի վրա պառկեց զրեցին: Առաւօտեան ժամի 10-ին նոյն Պանթէօնում հրապարակական հոգեհանգիստ կատարվեց, որին ներկայ էին զիւանապետական կազմը, մինիստրները, պարլամէնտի անդամներ եւ քաղաքացիական ու զինուորական իշխանութիւններ: արարողութիւնը խոր տպաւորութիւն էր գործում: Պանթէօնի առաջ կանգնած էր լուռ ամբոխ:

ՆԵԱՊՈԼԻ. Կրիսպին այսօր թագաւորին, Մարգարիտա թագուհուն եւ Հոսմի սինդիկին հեռագրիներ ուղարկեց, որոնց մէջ ցաւակցութիւն է յայտնում այսօրվայ տարեդարձի առիթով:

Կրիսպին առողջութեան մէջ տեղի ունեցաւ նկատելի բարելոքում:

ՇԱՆԳԱՅ. Զփրիի հարաւ-արեւելեան մասից ստացված չինական տեղեկութիւններով, այսպէս կոչված գիւղականների զաչնակցութիւնը կազմված է այժմ 25,000 լաւ զինված

զորքերից, որոնք մեծ մասամբ բաղկացած են նախկին բուռնցքականներից եւ պաշտօնավոր գիւնուորներից. Դրանք աւար առան բոլոր կայսերական միջոցները, որ անց էին կացնում Պեկինից այդ նահանգի միջով:

17 յուլիսի

ԲՈՍՏՈՆ. ԴՈՆԻ ՎՐԱ. Ցարիցիների ժամանեց մամուլի գործերի գլխավոր վարչութեան պետ իշխան Շարաֆալոյ:

ԼՈՆԴՈՆ. Համայնքների ժողով: Զինուորական մինիստրութեան ֆինանսական քարտուղարը Ստանլէյ հաղորդում է, որ պատերազմի սկզբից գերի առնված կամ անձնատուր եղած բռնիների թիւը հասնում է 33,000-ի:

Ստիւարտի հարցին, թէ արդեօք կառավարութիւնը նպատակաւորաբար չէ համարում լիազորութիւն տալ Զինատանին աւելացնել ավիոնի տուրքը՝ պատերազմական վարձատրութեան համար հարկաւոր միջոցները աւելացնելու նպատակով, Կրանօրն պատասխանում է, թէ այն եկամուտների հարցը, որ Զինատանը գործադրելու է պատերազմական վարձատրութիւնը վճարելու համար, արդէն վճարված է պետութիւնների փոխադարձ համաձայնութեամբ:

ԼՈՆԴՈՆ. Համայնքների ժողով: Արքայական այն թղթի ընթերցումը, որով առաջարկվում է յօրդ Բորեւտարն 100,000 ֆունտ ստէրլինգ (մօտ մի միլիոն ռուբլի) պարգև նշանակել, իրանդաղիները հանդիպեցին բարձրաձայն բողոքներով:

Բրոքրիկ, պատասխանելով իրան ուղղված հարցին, յայտնում է, որ զինուորական մինիստրութեան պաշտօնեաներից մէկը արձակված է, որովհետեւ նա Լոնդոնի լրագրիչներից մէկին հաղորդել էր տեղեկութիւններ զաղտնի թղթերից՝ յօրդերի ժողովում տեղի ունենալիք դէպքերի մասին:

Լորդ Բորեւտարի առաջարկում է արքայական տիտղոսի ճանդուղիներուսեան բրիտանացիների թագաւորը բաւերը փոխարինել զբոլոր անդրովիանեան բրիտանական երկրների թագաւորը բաւերով:

Կ. ՊՈԼԻՍ. Երէկ այստեղ ժամատարով հիւանդանոցում մի նոր դէպք էլ եղաւ, եւ այն անգրիական զինվորական մօտ:

ՇԱՆԳԱՅ. Հաղորդում են, որ Զփրիի նահանգում գիւղականների զաչնակցութեան Լի-խունցչանգի զորքերի դէմ ունեցած ջողութիւնների չորսիւ. Շանցուն նահանգում նորից սկսվեց բուռնցքականների շարժում:

Լուրերին նայելով, Իւն-Լու ստացել է պետական եկամուտների գլխավոր վարչութեան մէջ վերահսկողի արդիւնաւէտ պաշտօնը:

ՅՄԱՐԱԳԻՐՆԵՐ ԱՆԷՔՍԱՆԴՐՈՒՄՈՒՆԵՐԱՐ ՀՐԱՄԱՐԱԿԻՆԵՐԻ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգի բժշկական վարչութեան թղթաւորութեամբ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ռ. եւ 1 ռ. 50 կ.:



ՆՈՐ ՄԻՋՈՑ
ժաղերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ունչապանութիւն է թիւրքի Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ՁՈՒՆ ԿԱԹԷ

Երեսին քննութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուգները, տալիս է կաշուին քնքշութիւն եւ սպիտակութիւն: Այդ գները չափաւոր են. մեծ օրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ռ. 50 կ. Մարվում են բոլոր պարֆումերական եւ զեղալիքական խանութներում: Գլխաւոր պահեւադ գտնվում է Պետերբուրգում, Պուլկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում: Երեսինեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բազուււ. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի եւ Արիստակովի դեղատանում: Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են ան ֆլապէս՝ պատուով: 43—100

ԱՆԷՔՍԱՆԴՐՈՒՄՈՒՆԵՐԱՐ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
վաճառվում են.
ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐԻ. «Մարենի լեզու» առաջին տարի, Յովհ. Արաքելեանի, բազմաթիւ մաքուր պատկերներով, գինն է 30 կոպ.
Տիկ. Տիրուհի եւ պ. Յ. Կոստանեանցիների բոլոր աշխատութիւնները:
Գումարով գնողներին սովորական զիջումն է Դիմել՝ Александрополь. Книгопродавцу Степанянцъ. 1—5

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԻ ՌԻՍՈՒՑԻՉ
400 ռուբլի ու ճիւղով
Դիմել՝ кн. магазинъ «ГУТТЕНБЕРГЪ» (Лорисъ-Меликовская № 11): 2—3

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵՎԱՆ
1) «ՎՏԱԿ» հանդէսը, որ արժէ թիֆլիսում 1 ռ. 50 կ., քաղաքից դուրս 2 ռ.: Յատկապէս այս հանդէսի համար պատրաստվում են չքեղ եւ համեստ կազմեր 40 կ., 50 կ., 75 կ. եւ 1 ռ.: 2) Վրթանէս Փափագեանի «ՊԱՏՄՈՒՆԻՔՆԵՐ» գրքով, որ թիֆլիսում արժէ 50 կ., քաղաքից դուրս 65 կ.:—Յիւլի երկու գրքերը ի վաճառ կր նանկեն գրաքննիչից իրաւունք ստանալուց յետոյ, ժողաւորապէս յուլիսի վերջին 3) Ալըշ Զիւանիի «Բեարամ եւ Ասլի» հեքիաթը, գ. 60 կ., քաղաքից դուրս 80 կ.: Գումարով գնողներին զիջումն է կր ինի: «Վտակ» համար բաժանորդագրութիւնը Կենտրոնական գրալաճառանոցում շարունակվում է:
Դիմել՝ Тифлисъ. Центральная Книжная Торговля. 1—10

Ի. ԵԱ. ԲՐՈՆ-ՖՈՆ-ԲՐԷՆԵՐԻ ՀԱՇԻՍՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻՑ

Նիկոլայեվսկայա, № 88.
Խնդիրները ընդունելութիւնն սկսված է: Պարագմունքների սկիզբը սեպտեմբերի 10-ին: Դասընթացը բաժանված է կիսամեակների: Պարագմունքները տեղի են ունենում ճաշից յետոյ: Վճարը ամբողջ դասընթացի համար 60 ռուբլի: Ընդունվում են երկու սեռի անձինք:

ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ԵՒ ԴԱՍԱՏՈՒԱՆՁԻՆՔ.
1) Հաշապահութիւն } Ի. Եա. Բրոն-ֆոն-Բրէնէր, դասարանների հիմնադիրը:
2) Բանկային գործ }
3) Առեւտրական թուարանութիւն }
4) Թուարանութիւն հաշեկոյցով }
5) Տեխնոլոգիա } Մ. Բ. Զէնգէրի, լեռնային ինժեներ, պետական խորհրդական:
6) Ապրանքագիտութիւն }
7) Թղթակցութիւն }
8) Առեւտրական օրէնքներ } Վ. Ս. Մոսկալով, պրոկուրորի օգնական, թ. ն. դ.
9) Առեւտուր }
10) Գեղագրութիւն—Գ. Եա. Դիւկով, ինժեներ-երկրաչափ.

ՈՂ - պ ա ռ ա դ ի Ր ա ո ա Ր կ ա ն Ե Ր
1) Ֆրանսիական լեզու—Է. Կ. Լիօզէկ, դաս. 2-րդ կլասիկ. գիմնազիայի.
2) Գերմանական լեզու—Ի. Յ. Գրուսիկ, դաս. Թիֆլ. ընկալական ուսումնարանի.
3) Սլաւոնական լեզու—Ի. Եա. Բրոն-ֆոն-Բրէնէր.
4) Ուսուցումն գրելու գործը մեղմանալով, նաեւ կողմնակի անձանց համար:
Միջին օգնական 10-ը խնդիրները ընդունվում են դասարանների հիմնադրի մօտ՝ նրա բնակարանում, Միխայիլովի պրոպէկտ, № 71, իսկ յետոյ դասարանների զիւանադարձ, Նիկոլայեվսկայա, № 88. 1—20

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
Լ Է Օ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԿԵՆԱՔԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՏԵԱՆՈՒՄ
Հատոր առաջին—XVI—XVII դար
Գինն է 1 ՌՈՒԲԼԻ 50 ԿՈՊԵԿ
Մարվում է թիֆլիսում, «Մշակ» խմբագրատանը.
Օտարաքաղաքացիները գիմում են. Тифлисъ, редакция «Мшакъ». 10—10

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԳԻՐԵԿՏՈՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԸ

Հաղորդում է ի գիտութիւն ընդհանուր, թէ աշակերտների ընդունելութիւնը նախապատրաստական դասարանի տարրի բաժանմունքը եւ նոր բացվող միջին բաժանմունքը նշանակված է այս 1901—1902 ուսումնական տարվայ օգոստոսի 28-ին եւ 31-ին: Ստորին բաժանմունքը ընդունվում են տղաներ 7-ից մինչեւ 9 տարեկան հասակում առանց քննութեան, միջին բաժանմունքը—8-ից մինչեւ 10 տարեկան քննութեամբ: Խնդիրները ընդունվում են երկուշաբթի, չորեքշաբթի եւ չորսթ օրերը, երեկվայ ժամի 11-ից մինչեւ 1-ը, ուսումնարանի շինութեան մէջ: Խնդիր հետ միասին պէտք ներկայացնել՝ մեքրիկական վկայականի իսկականը, վկայականներ՝ կոչման, ծաղկի պատճառածման մասին կամ նրանց պատճենները: Խնդրագիրները առանց վերոյիշեալ դօկումենտների չեն ընդունվի:
(9, 11, 13, 16, 21) 4—5

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒՍԵՌԻԱՆ ՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆԵՆՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց եւ պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ:

Առեւտրական Կուրսերը ստանում են առտեւտարական:

Առեւտրական Կուրսերը ստանում են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն, 2) Առեւտրական Թուարանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի եւ բանկային), 4) Թուարանութիւն համարի վրա, 5) Առեւտրական Թղթակցութիւն, 6) Առեւտրական եւ մուրհակ կանոնադրութիւն եւ 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելով:

Առեւտրական Կուրսերը սկսվում են սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչեւ 11-ը, եւ երեկոյեան 4-ից մինչեւ 8 ժամը, կուրսերը հիմնովի բնակարանում, Սոլովակով, Ալեքսանդր Փրիգոժովի տանը № 9, Սերգիեվսկայա եւ Լեբոմոնովսկայա փողոցների անկիւնում: Մարգարի եւ կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եւ եղբ. Մովսիսովիների բանկային գրասենեակում եւ կուրսերը հիմնովի բնակարանում: Օտարաքաղաքացիները գիմում են Թիֆլիս, С. П. Мануэляны, (չ. ո.) 11—25